ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 31 օգոստոսի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի
Անդամակցությամբ՝ Հ. Դանիելյանի
Ռ. Պապայանի

Քննության առնելով քաղաքացի Հովսեփ Գալստյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Հովսեփ Գալստյանը 2010թ. օգոստոսի 11-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր:

Տվյալ անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ՝

1. Դիմողը, մատնանշելով եւ վերլուծելով վիճարկվող դրույթի՝ իր կարծիքով անհամապատասխանությունը նույն օրենքի այլ դրույթներին, իրավաբանորեն չի հիմնավորել դրա հակասահմանադրականությունը, մինչդեռ համաձայն «Սահմանադրական դատարանի

մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների՝ դիմողը պետք է ներկայացնի անհրաժեշտ հիմնավորումներ՝ վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ:

2. Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-839 որոշման մեջ արտահայտած դիրքորոշման՝ եթե դիմողի կողմից չի հիմնավորվում վիճարկվող դրույթի եւ իր իրավունքների ենթադրյալ խախտման փաստի միջեւ պատճառահետեւանքային կապը, ապա տվյալ դիմումն ակնհայտ անհիմն է: Դիմողն իրավաբանորեն պատշաճ չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի եւ վիճարկվող դրույթի միջև անմիջական պատճառահետեւանքային կապի առկայությունը: Հետեւաբար, առկա է դիմումի քննությունը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված հիմքը:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով, 69-րդ հոդվածի 4-րդ եւ 7-րդ մասերով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացի Հովսեփ Գալստյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

31 օգոստոսի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/2-28